

Տեղեկագրի նյութեր.

Թարմացումներ անկախ (ինքնուրույն) ուսուցման վերաբերյալ

Այս ուսումնական տարվա ընթացքում, անկախ (ինքնուրույն) ուսուցման բոլոր դասընթացները տեղի կունենան շրջանի Անկախ ուսումնական ակադեմիայի ծրագրի միջոցով: Սա նոր ծրագիր է ներառում տարրական դպրոցի ԱՄ-5-րդ դասարանների աշակերտների համար, ինչպես նաև ավանդական մոդել, որը համապատասխանում է դասընթացի հիման վրա հիմնված մեր մոդելին, որն այժմ տրամադրվում է Անկախ ուսուցման ակադեմիայում: Ահա ծրագրերի համառոտ նկարագրությունը.

Տարրական դպրոցի անկախ (ինքնուրույն) ուսուցում. Բոլոր դասարանների աշակերտներն ուղիղ եթերով (առցանց) առօրյա դասավանդում կստանան անգլերեն լեզվից և մաթեմատիկայից: Մնացած առարկաները պետք է պարապել ինքնուրույն: Բացի այդ, ամեն օր կեսօրից հետո, նրանք կարող են օգնություն ստանալ: Աշակերտների համար մեկ ուսուցիչ կնշանակվի, որը պատասխանատու կլինի դասավանդման, գնահատման և առաջընթացի վերահսկման համար: Աշակերտները 5 օրվա ընթացքում կարող են անձամբ վերադառնալ դպրոց, եթե պահանջեն: Ամեն ջանք կգործադրվի երեխային բնակության իր դպրոցում տեղավորելու համար, սակայն նա կարող է ստիպված լինել հաճախել Բրբենքի մեկ այլ դպրոց: Անկախ ուսուցման ակադեմիայի (ILA) աշխատակազմը ձեռք կմեկնի այն ընտանիքներին, որոնց երեխաներն արդեն արձանգրված են այս ծրագրում կամ էլ այն ընտանիքներին, որոնք ցանկանում են, որ երեխան սկսի հաճախել աշնան ընթացքում: Մեր ունեցած մեկ նորությունն այն է, որ աշակերտը չի կարող սկսել անկախ ուսուցումը, մինչև ծնողի կողմից պայմանագրի ստորագրելը:

Միջնակարգ դպրոցի անկախ ուսուցում. Միջնակարգ դպրոցի անկախ (ինքնուրույն) ուսուցման ծրագիրը բաղկացած է երկու տարբեր մոդելներից. դասընթացի վրա հիմնված մոդելը և ավանդական մոդելը: Երկու մոդելներն են թույլ են տալիս աշակերտին անձամբ հաճախել դպրոց և երկու դաս վերցնել այնտեղ:

Դասընթացների վրա հիմնված – Դասընթացների վրա հիմնված մոդելը թույլ է տալիս միաժամանակ 1-2 դաս վերցնել: Դասը պետք է ավարտել 22 օրվա ընթացքում, որպեսզի կարողանաք մեկ այլ դաս վերցնել: Միջնակարգ դպրոցի աշակերտները կարող են շաբաթը (կախված վերցրած դասերի թվից) 1-2 անգամ ուղիղ եթերով (առցանց) դասավանդում ստանալ: Միջանկյալ դպրոցի աշակերտները կարող են շաբաթը 1-2 անգամ ուղիղ եթերով (առցանց) դասավանդում ստանալ, ինչպես նաև ամեն օր կարող եք ուղիղ եթերով հանդիպել ուսուցչի հետ: Մնացած ժամանակը, աշակերտը պետք է ամեն օր ինքնուրույն կատարի իր հանձնարարությունները: Սա ամենալավ տարբերակն է այն աշակերտների համար, ովքեր ցանկանում են միաժամանակ կենտրոնանալ մեկ դասի վրա և այն աշակերտների համար, ովքեր ցանկանում են արագ առաջընթաց ունենալ: Սա լավ տարբերակ է նաև այն աշակերտների համար, ովքեր ցանկանում են ամբողջ ուսումնական տարվա ընթացքում մնալ անկախ (ինքնուրույն) ուսուցման ծրագրում:

Ավանդական մոդել – Այս մոդելի ընթացքում, աշակերտը միաժամանակ 6 դաս է վերցնում և ավարտում այդ դասերն ամբողջ կիսամյակի ընթացքում՝ ինչպես կատարվում է անձամբ դպրոց հաճախելու ընթացքում: Այս մոդելի ընթացքում, նա ամեն դասի համար շաբաթն առնվազն մեկ անգամ ուղիղ եթերով (առցանց) կհանդիպի ուսուցչի հետ: Բացի դրանից, նրանք պետք է ինքնուրույն կերպ կատարեն հանձնարարությունները: Այս մոդելն ամենալավ տարբերակն է այն աշակերտների համար, ովքեր կցանկանան անձամբ դպրոց վերադառնալ ուսումնական տարվա ընթացքում:

Հատուկ ուսուցում. Հատուկ ուսուցման ծառայություններ ստացող աշակերտների ընտանիքները, որոնք հետաքրքրված են անկախ (ինքնուրույն) ուսուցման ծառայություններով, պետք է դիմեն երեխայի գործակալին IEP ժողով հրավիրելու համար:

Անկախ ուսուցման ակադեմիայի վերաբերյալ հավելյալ տեղեկություն ստանալու համար, խնդրում ենք դիմել հետևյալ անձանց.

Օրիորդ Լոռա Անդերսոն – Անկախ ուսուցման ակադեմիայի ադմինիստրատոր
lauraanderson@burbankusd.org;

Դոկտոր Փիտր Քնապիկ – Տարրական կրթության բաժնի վարիչ peterknapik@burbankusd.org

Դոկտոր Ջոն Պարամո – Կրթական ծառայությունների գծով գերատեսչի տեղակալ
johnparamo@burbankusd.org